

3228

89171 U
U-74

898


1.10
2.11.0

XVI 23.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍՏԱՆԻՑԱԿԱՆ—ՄԱՐԳԱՐԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Նուէր Յովհաննէս Եւ Կարապէտ Խալա-
թեաններից՝ ի յիշատակ իրենց եղբօր՝ պրօֆ.
Գրիգոր Խալաթեանի:



5819

3228

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 185

Վ. Պ. ԱՎԵՆԱՐԻՈՒՍ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍԵ ՆԵԱԿԸ

ՄԱՆԿԵԱՆ ԶԲՈՅՅ

Թարգմ. Չ. Տ-Գ.

№ 11 ՀՐԱՏԱՐԵՎՈՒՐԻ Ը. ՊՕԳՈՍԵԱՆԻ ԳՈՒՄԵՐՈՎ, № 11



Թ Ի Ք Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսյանցի,

Միքայելեան փողոց, № 81.

1900



ՀԱՅԿԱՆ ՀԱՅՈՑԻ ԳՐԱԳԱՐԱՆ
Վ. ԱՎԵՆԱՐԻՈՒՍ
ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍԵ ՆԵԱԿԸ
ՄԱՆԿԵԱՆ ԶԲՈՅՅ
Թարգմ. Չ. Տ-Գ.
ՍՅԱՍՆԻԿՅ. ՅԻ ԱՆԿԱՆ

3228

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 185

891.71-05
Ա-79
ur

Վ. Պ. ԱՎԵՆԱՐԻՈՒՍ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍԵՆԵԱԿԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՅՑ

Թարգմ. Զ. Տ-Գ.

1002
6692

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 11 ՀՐԱՏԱՐԵՎՈՒՄԸ Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ԳՈՒՄԱՐՈՎ, № 11



Թ Ի Ֆ Լ Ս

Արագաստիկ Մն. Մարտիրոսյանցի,


Միջայլիկան փողոց, № 81.

1900

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Іюня 1900 г.



Ա



Քեզ գիշեր է: Մանկանոցում համարեա ոչինչ չէ երևում: Բայց Լեոնի քունը չէ տանում. կամ մի կողքին է դառնում, կամ միւս. կամ կուշ է դալիս, երկուտակում, կամ ոտները կրկին մեկնում:

Ու՛ֆ, ինչ շոգ է. երեւի աղախինը շատ փայտ է դրել վառարանը...

Լեոնը յետ ձգեց վերմակը, կուրծքը բաց արաւ և ձեռքերը դրեց բարձի վրայ՝ գլխի տակը:

Բայց նրա քունը էլի չէ տանում: Չարունակ գլխի մէջ կարծես ջաղաց է թխթխկում: Մտքեր են դալիս գէտից դէնից: Ինչ է պատահել նորան.—Այ թէ ինչ. Լեոնը սրամիտ երեխայ է. ուզում է, որ ամեն բան իմանայ և հարց ու փորձ է անում հօ-

րից, մօրից, մեծ քրոջից, աղախնից. «Ինչի սա այսպէս է և ոչ այնպէս. ինչից շինած է սա և սրտեղից է...» Եւ նրա գլխում հիմա այնքան բան է հաւաքուել, որ էլ տեղ չկայ, և նա չէ կարողանում քնել:

Յանկարծ Լևոնը վեր թռաւ: Այս-ինչ է: Կարծես չորս կողմում մի տեսակ խշխշոց ու թրխկոց է լսում, ինչ-որ օտարոտի, փայտէ ձայներ են գալիս... Լևոնի սիրտը սկսեց թրթռալ: Չունչը իրան քաշելով՝ բարձի մի անկիւնից նա սկսեց նայել և լսել:

— ❦ —

Բ

Այ գարմանալի բան. աթոռներն են, իսկ և իսկ աթոռները, որ խօսքի են բռնուել իրար հետ, ոտքերով թխկացնում են, թիկունքները շարժում և բլբլացնում...

— Սպասեցէք, պարոններ, չէ կարելի, որ ամենքը միաժամանակ խօսեն, — միւսներից բարձր բղակեց մի աթոռ: — Մենք բոլորս իրար նման ենք, կարծեմ վիճելու բան չկայ: Թողէք, պարոններ, որ ձեր բոլորի տեղ խօսեմ և պատմեմ ամեն մէկի սրտինը:

— Պատմիր, պատմիր, թող պատմէ, — բղակեցին բոլոր աթոռները միաձայն:

— Մենք մեր ջահէլուժիւնը յիշեցինք, — սկսեց աթոռը: — Երանի այն օրերին, երբ մենք դեռ թրխտենի էինք և դիք կանգնած էին անտառում: Արեգակը մեզ տաքացնում էր, անձրևը մեզ խմելու ջուր էր տալիս, թռչունները մեր գլխին բոյն էին շինում, երգում էին: Մեզ մօտ զբօսնելու էին գալիս գիւղացի աղջիկներն ու տղաները՝ հաղարջ քաղելու կամ սունկ ժողովելու համար: Նրանք ման էին գալիս և յանկարծ կանգնելով՝ բացազանչում էին. «Ի՜նչ հրաշալի բուրմունք են տալիս այս թրխտենիները»: Յիշում էք, պարոններ:

— Իհարկէ, յիշում ենք, ինչպէս կարելի է մոռանալ, — դարձեալ պատասխանեցին բոլոր աթոռները:

— Բայց արի տես, որ երբ մեծացանք՝ սկսեցինք ձանձրանալ միշտ միևնոյն տեղը կանգնելուց և միայն մեր ճղները շարժելուց, ուղեցինք հեռանալ, աշխարհ տեսնել. կարծես թէ օտարութիւնը տանից լաւ էր... Եւ եղաւ՝ ինչ որ ուզում էինք. մեր հախից լաւ եկան, — շատ էլ տեղն էր: Գիւղացիք մեզ բոլորիս արմատից կտրտեցին — ո՛հ, ինչպիսի ցաւ էինք զգում այդ ժամանակ: Մեր մանր ճղները կտրատեցին վառելու համար, իսկ հաստ բները տարան քաղաք — ատաղձագործի մօտ: Ատաղձագործը մեզ սղոցով սղոցեց, կացնով և ուրագով տաշեց ու ռանդայով ռանդեց. յետոյ սկսեց

մեզ ճախարակել և ծակոտել չարխի վրայ և սուրն-
 ձով իրար կպցնել, մինչև որ մեզանից իսկական
 աթոռներ պատրաստեց: Յետոյ ամեն մէկիս մէջ-
 տեղը եղեգնեայ հիւսուածք ամրացրեց, ներկեց,
 լակ քսեց, և վերջապէս ամեն մէկս դարձանք մի
 մի գեղեցիկ աթոռ: Մաքուր, հարթ, ոտքը ոտքի
 նման, թիկունքը թիկունքի նման, կարծես քաջարի
 զինուորներ լինէինք: Թուում էր թէ հէնց այդպէս
 էինք ծնուել, աշխարհ եկել, բայց ինչ բաներ ան-
 ցան մեր գլխով, մինչև որ այստեղ հասանք: Մենք
 էլ դպրոցում եղել ենք և դեռ ինչպիսի դպրոցում:
 Այդ պատճառով էլ մենք մարդկանց մօտ լաւ պա-
 տիւ ունինք. հէնց որ նրանք յոգնում են՝ իսկոյն
 բազմում են մեզ վրայ: Ուռւ:

—Ուռւ,—կրկնեցին բոլոր աթոռները:

—Գարոններ, չէ՛ կարելի մի քիչ կամաց,—
 ասաց աթոռների մէջ կանգնած սեղանը:— Ինչ մի
 մեծ պատիւ է, որ մարդիկ քամակները դարձնում
 են դէպի ձեզ և նստում են ուղղակի ձեր երեսների
 վրայ: Իսկապէս ես միայն գլուխս գովելու իրաւունք
 ունիմ: Մարդիկ երեսները դէպի ինձ են նստում
 միշտ և ինձ վրայ են դնում այն բոլոր բաները,
 որ ափսոս է յատակին դնել: Հիմա կհարցնէք, թէ
 ինչի:—Որովհետեւ ես ձեզ նման հասարակ թխտե-
 նուց չեմ շինուած, այլ ընկուզենուց. որովհետեւ իմ
 երեսը հայելու նման հարթ և փայլուն է. ատաղ-
 ձագործը ինձ միայն հասարակ լակ չքսեց, ինչպէս



ձեզ, այլ չեչաքարով և ողորկիչով*) յղկեց, և շատ քիչ կպատահի, որ նոյն-իսկ կեանքը կարողանայ մարդկանց այնպէս յղկել: Մենք այստեղ միայն երկուսս ենք հարազատ եղբայրներ—ես և անձ այն հագուստի պահարանը, որ նոյնպէս ամբողջովին ընկուզենուց է և լաւ էլ յղկած է:

—Հն, հէնց այդ է, — ծիծաղեց նոյն աթոռը: — Շապա ինչի քո այդ պահարանը մէջքը սեղմել է պատին: Կարծես մենք չգիտենք, թէ նրա մէջքը ո՛չ թէ միայն յղկած չէ, այլ ընկուզենուց էլ չէ. սոճուց է, ամենահասարակ սոճուց:

Մեծ ու հաստափոր ծերունի պահարանը մինչև այդ լուռ էր: Հիմա նա էլ չկարողացաւ տանել կռուասէր աթոռի ծաղրը:

—Քեզ պէս ծծկերի բանը չէ խօսելը, ոչ էլ ինձպէս ծերունուն վայել է քեզ լսելը, — փնթփրնթաց պահարանը: — Միթէ սոճին նոյնպիսի ծառ չէ, ինչպէս ընկուզենին կամ թխտենին: Միայն մի քիչ հասարակ է: Ո՛վ է իմ մէջքը տեսնում: Հէնց այդ է պատճառը, որ նա տնային հասարակ չոր է հագել: Բանը հօ հագուստի մէջ չէ, այլ գլխաւորն այն է, թէ ի՞նչ բանի է պէտք գալիս և ի՞նչ պէս է պահում իրան: Ա՛յ, օրինակ, ես տան ամենահաւատարիմ բարեկամն եմ. ինչ որ էլ իմ մէջը

*) Политура—պօլիտուրա:

դնեն՝ ամուր կպահեմ. ոչ փոշի կնստի, ոչ ցեցը կուտէ և ոչ էլ գողը կարող է գողանալ:

Գ.

Մի ինչ-որ բան զընկալով ընկաւ յատակի վրայ: Սա ո՞վ է: — Լևոնը կամաց բարձրացրեց զուխը, որ տեսնէ, թէ ինչ բան էր ձայն հանողը: Օհօ. դա պահարանի բանալին է, որ դուրս թուալիւր կողպէքից: — Է՛, փայտէ պարոններ, ինչ շատ էք պարծենում, — ասաց բանալին: — Դու էլ, բարեկամ, նրանց խելքովն ես ընկել, — դիմեց նա պահարանին: — Թէև ես ու դու վաղուցուայ բարեկամներ ենք, բայց բարեկամութիւնը մի կողմ մնայ, երբ պէտք է գործից խօսել: Առանց ինձ, համաձայնուիր, դու մեծ նշանակութիւն չէիր ունենայ. փոշին էլ, ցեցն էլ, գողն էլ ազատ կարող էին մտնել քո մէջ: Ես պստիկ եմ, բայց չստիկ, — ոչ թէ փայտից, այլ երկաթից եմ շինուած: Փայտը համ փխրուն է, համ շուտ կոտրուող, համ այրում է, համ էլ շուտ փտում: Իսկ երկաթը ծաւալուող է, ճկուն և դիմացկուն: Մենք, մետաղներս, շատ շատ ենք, որ մէկն ասեմ: Ոսկին ու արծաթն ամենից նշանաւոր մետաղներն են, բայց ամենից պէտ-

քականը երկաթն է. նա ամեն տեղ պէտք է գալիս:

— Մենք էլ երկաթից ենք, մենք էլ, — վերևից բղաւցին պատերին խփած մեխերը:

— Այո՛, դուք էլ, եղբայրներ, — ասաց բանալին: — Ճիշտ է, դուք շատ էլ շէնքով շնորհքով տեսք չունէք — մի կոթ ունէք և մի գլուխ, սակայն ձեր շիւքներից որքան բան կարելի է կախել: Բայց մեր ամենքիցս աւելի պատուելին մահճակալ տատն է: Նրա վրայ են հանգստանում աշխատանքից յոգնած մարդիկը: Այ տատի, չես պատմի մի բան մեր, երկաթներիս, կեանքից:

Լևոնը վախից քիչ մնաց վայր ընկնէր մահճակալից. նրա տակի մահճակալը յանկարծ շարժուեց և լսելի կերպով ճռճուաց:

— Օհ, որդիք, — ճռճուաց մահճակալը, — Մեր երկաթէ ցեղը այս աշխարհից չէ: Մեր հայրենիքը այստեղ երկրի երեսին չէ, այլ խորը գետնի տակն է, սարերի մէջ: Մենք այնտեղ ընկած էինք շատ երկար ժամանակ — հարիւրաւոր, հազարաւոր տարիներ ընկած էինք քարէ անճոռնի կոյտերով ինչպէս հանք: Մեր շուրջն էլ միշտ գիշեր էր, միշտ լուռ: Ո՛չ մի ձայն, ոչ մի ծպտուն: Հազարից մի անգամ վերևից մեզ էր հասնում անձրևի ջուրը. տեսնում ես՝ մի ինչ-որ բան կլկլում է — չես էլ հասկանում, թէ ինչ է — և շուտով հեռանում է: Բայց մարդիկ փորեցին և հասան մեզ: Նրանք մեզ

դուրս հանեցին գետնի տակից, փշրեցին և ածու-
խի հետ միասին լցրին մի մեծ հնոցի մէջ—մի
շերտ հանք, մի շերտ ածուխ, էլի մի շերտ հանք
և էլի մի շերտ ածուխ: Տակից կրակը վառեցին,
փուքսերը ուռցրին, և փչէ հա փչէ: Թէժ, սաստիկ
կրակ: Հանքը հալուեց և հոսեց ներքև փոսի մէջ:
Հնոցի կողքին մի ծակ կար: Բաց արին այդ ծակը
և դուրս թողեցին երկաթի հանքի կեղտոտ մասը,
աղբը: Իսկ յատակին գիտէք ինչ մնաց.—այնտեղ
մնաց մաքուր, ծանր երկաթը: Ըստ մարդիկ էլ
զրսից այնքան մաքուր և սիրուն չեն լինում, բայց
նրանց մէջ մաքուր մետաղ է լինում,—նրանց բարի
սիրտը: Այդպէս մենք դարձանք երկաթ. դրա-
նից յետոյ մեզանից ամեն բան կարելի էր շինել,
—մահճակալ, բանալի, մեխեր և ուրիշ հարկերաւոր
զանազան օգտակար բաներ: Հիմա էլ մարդիկ, երբ
ուզում են գովել մէկի առողջութիւնը կամ հաս-
տատ կամքը՝ ասում են. «Օ՛, նա երկաթէ մարդ
է, երկաթի բնաւորութիւն ունի»:



Սա ո՞վ է, որ անկիւնից տնքտնքալով փնջփնջա-
լով՝ պատասխանում է մահճակալին: Հն, վառա-
րանն է, մեր պառաւ վառարանը:

—Իսկ ինձ ինչո՞ւ մոռացար, տիրուհի,—ասաց
նա:—Թէև ձեր հարազատ մօրաքոյրը չեմ, բայց
էլի, կարծեմ, ազգական ենք: Դրսից հօ ես էլ բո-
լորովին երկաթից եմ շինուած, միայն մէջս աղիւ-
սից է. բայց չէ որ աղիւսներն էլ ձեզ պէս հողի
ծնունդ են: Աւազն ու կաւը խառնել են ու թխել՝
ինչպէս որ գաթայ են թխում խմորից: Եւ ինչպէս
են կարծրացել, կարմրել: Տեսէք, ամեն օր ես ո՞ր-
քան ծուխ ու կրակ եմ կուլ տալիս. պէտք էր որ
իմ աղիւսէ փորը բոլորովին այրուէր, բայց իսկի
պէտքս էլ չէ: Միայն լաւ տաքանում եմ և ծուխը
բերանիցս փո՛ւ հա փո՛ւ դուրս եմ փչում: Եւ ինչ-
պէս սիրում են ինձ մարդիկ: Հէնց որ մի քիչ մըր-
սում են՝ վազում են ինձ մօտ, որ տաքանան: Ա-
ռանց իմ տաքութեան՝ նրանց կեանքը բանի նման
չէր լինի:

—Տաքութիւնը հօ հարկաւոր է,—ասաց վառա-
րանի մօտ գտնուող աթոռի վրայ դրուած լուա-
ցարանը.—բայց առողջութեան համար հարկաւոր
է, որ մարդիկ իրանց մարմինները մաքուր պահեն:
Իսկ այդ գեղեցիկ ծառայութիւնը ես ու իմ եղ-

1657003

բայր փոքրիկ սափորն ենք մատուցանում մարդկանց: Մենք լաւ ցեղից ենք. թէև կաւ ենք, բայց ամենանուրբ, ամենաազնիւ կաւից—Ֆայեանսից:

—Միտդ է, քոյրիկ, թէ ես ու դու ինչպէս աշխարհ եկանք, —հարցրեց սափորը:

—Ի հարկէ միտս է, —պատասխանեց լուացարանը. —կասես այսօր էր: Փայեանսի գործարանումն էինք. ես մի կաւի կտոր էի, վայր էի ընկած մի անկիւնում: Յանկարծ վարպետն ինձ բռնեց և, շրմփ, լսփեց կլոր սեղանին, յետոյ սկսեց ոտով պտտացնել փոքրիկ սեղանը, իսկ ձեռքերով հատրորել, հա սեղմել ինձ, այնքան որ գլուխս սկսեց պտոյտ գալ: Միայն զգում էի, որ մէջտեղս դէպի ներս է սեղմւում, իսկ պռունգներս սկսում են ծալուել: Վարպետը վերջացրեց իւր գործը և ինձ դրեց նստարանի վրայ: Նայում եմ վրաս, և ինքս ինձ չեմ ճանաչում: Մի կտոր անպէտք կաւից ես մի սիրուն լուացարան էի դարձել: Նայում եմ—վարպետը կրկին սկսեց պտտացնել իւր փոքրիկ սեղանը և տրորել ու ճնշել մի ուրիշ կտոր կաւ: «Տեսնես ինչ պիտի դուրս գայ», —մտածում էի ես: Եւ գիտէք ինչ դուրս եկաւ:

—Ես դուրս եկայ, —ներախօսքը կտրեց սափորը:

—Հապա ո՞վ պիտի դուրս գար: Հէնց որ քեզ տեսայ՝ ճշմարիտն ասած՝ այնպէս ուրախացայ... կարծես սիրտս ինձ ասաց, որ դու իմ հարազատ եղբայրն ես: Հէնց որ վարպետը յետ նայելով պա-

տահմամբ դիպաւ նստարանին՝ ես հօփ թռայ քո կողմը:

—Բայց ինձ չհասար, —ծիծաղեց սափորը: —Դու հեռու թռար. եթէ նա քեզ չբռնէր՝ գլուխդ պիտի ջարդէիր:

—Հա, ծիծաղիր, ծիծաղիր, —ասաց լուացարանը: Դու ինքդ ուրախութիւնիցդ քիչ մնաց դուրս պրծնէիր վարպետի ձեռքից, բայց նա ունկիցդ բռնեց. «Ո՛ւր, ո՛ւր ես գնում, մարդկանց տեսնելու և քեզ ցոյց տալու: Ձեզ վրայ, սիրելիք, դեռ ապակէնիւթ^{*}) չկայ, իսկ առանց ապակէնիւթի՝ ձեզ ո՞վ կտանէ»: Այս ասելուց յետոյ վարպետը կոխեց մեզ թէժացած հնոցը և վրաներս աղ ցանեց: Սաստիկ տաքութիւնից մենք կարմրեցինք, իսկ աղը հալուեց և մեզ վրայ ապակէնիւթ դարձաւ: Այդ ժամանակ նա մեզ հանեց հնոցից: «Դէ հիմա ման եկէք, ինչքան կուզէք. միայն չկուռէք և միմեանց քսուելով՝ չքերէք ապակէնիւթը:

—Իսկ ես ու բաժակը զուտ ապակուց ենք, —սեղանի վրայից ձայն տուեց ջրի շիշը: —Դուք մարդկանց դրսի կողմն էք լուանում, իսկ մենք ներսի: Դրա համար էլ մենք այսպէս թափանցիկ ենք. թո՛ղ ամեն մէկը տեսնէ, թէ ինչ է խմում:

—Ուրեմն դուք միայն աղից էք շինած, —հարցրեց սափորը:

*) Глазурь — գլազուր:

1002
6692

Ջրի շիշը բարձր քրքջաց. — է՛, եղբայր պատուական, դու կարծում ես թէ ձեր ապակէնիւթը միայն աղից է: Ապակէնիւթ շինելու համար, սիրելիս, հարկաւոր է երկու բան միասին հաշել կրակի վրայ— որեւէ հող և որեւէ աղ: Ձեր հողը կանն է, իսկ ձեր աղը՝ կերակրի մէջ գործածուող սովորական աղն է: Միասին դարձել են ապակէնիւթ: Մեր հողը կայծաքարի աւազն է, իսկ աղը կալաքարն է: Կրակի մէջ դրանք հալուել ու դարձել են հեղուկ ապակի: Կարծեմ տեսած կլինիս, թէ մեր տան տիրոջ որդի Լեոնը ինչպէս ծղօտով սապոնի փամփուռներ է բաց թողնում:

— Ո՞վ չէ իւր կեանքում սապոնի փամփուռներ տեսել, — ասաց սափորը:

— Ա՛յ, հէնց այդպէս էլ մեր վարպետը ապակու գործարանում վերցնում է մի երկար երկաթէ խողովակ, նրա մի ծայրը թաթախում է ապակէ հեղուկի մէջ և միւս ծայրից սկսում է փչել: Փչում է հա՛ փչում, իսկ միւս ծայրին ապակէ կաթիլը սկսում է ուռչել սապոնի փամփուռի նման: Ա՛յմարիտն ասեմ՝ շատ անախորժ բան է, երբ մարդու այդպէս ուռցնում են: Իսկ նա, բացի փչելուց՝ դեռ պտտեցնում է քեզ գլխի շուրջը, և ակամայ երկարանում ու ձգուում ես, ինչպէս վայել է ջրի շիշին: Յետոյ նա քեզ դնում է տաք սալաքարի վրայ (սալաքարը տաք է նրա համար, որ չմրսես ու չտրաքես) և դանակով բաժանում է քեզ խողովակից:

Օ՛ւֆ, կարծես վզիցդ թոկը հանեցին: Յետոյ երկաթէ փոքրիկ ճիպոտով մի կաթիլ ապակէ հեղուկ է վերցնում և պուռնգներդ է շինում. վերջապէս, գեղեցկութեան համար վզիդ կամ ուսերիդ անց է կացնում ապակէ մանեակ...

— Հապա ես... — գրնկաց շշի մօտ կանգնած բաժակը:

— Դ՛ու ի՛նչ ես, — խստութեամբ նկատեց ջրի շիշը: — Դու միայն կէս շիշ ես: Զիշը երկու մաս արին թէ չէ՛ և ահա՛ դու պատրաստ ես: Ահա՛ այսպէս է, բարեկամներ: Մենք ապակիներս թէև թոյլ ու փխրուն ենք, — անզգուշութեամբ խփես կամ Աստուած մի արասցէ, վայր գցես՝ իսկոյն կտորկտոր կլինենք, — բայց մենք շատ զգայուն և քնքոյշ սրտի տէր ենք. թէկուզ միայն մատով խփես՝ իսկոյն ձայն կհանենք, կզրնգանք:

Ե

Վերևից, ներքևից, աջ ու ձախ կողմերից յանկարծ մի տեսակ խշխշոց լսուեց, կարծես անտառում հազարաւոր տերևներ միաժամանակ շարժուեցին, Լեոնն էլ հով զգաց: Ա՛յ քեզ բան. պատի պաստառները արթնացան, շարժուեցին և սկսեցին խօսել:

—Ճշմարիտ է, պարոններ, դուք բոլորդ բաւական ապրել էք,—ասաց պատտաւոր:—Բայց դուք բոլորդ, փայտից լինիք թէ երկաթից, կաւից թէ ապակուց՝ ձեր առաջին կեանքն էք անց կացնում: Դուք հէնց այդպէս էլ կապրէք և երկրորդ կեանք չէք տեսնի երբէք:

—Իսկ դուք միթէ երկրորդ կեանքով էք ապրում,—զրընկաց ջրի շիշը:

—Հապա ինչ էք կարծում,—պատասխանեց պատտաւոր:—Իմ առաջին կեանքում ես հագուստ էի, իսկ հիմա թուղթ եմ դարձել: Քանի քանի տարիներ մարդիկ մեզ հագնում էին, ինչպէս սպիտակեղէն կամ վրայի հագուստ, մինչև որ մենք բոլորովին մաշուեցինք և պատառոտուեցինք: Չէ որ հէնց այդ պէտք է լինէր մեր կեանքի վերջը: Բայց ոչ: Մեզ ազատեց մեր նոր կնքահայրը—հնահաւաքը. «Ձի-շէր, ոսկոր-ներ, փա-լաս», բղաւում էր նա, փողոցները ման գալով: Փալասներ էին ժողովում տներից էլ, փոսերից ու աղբակոյտերից էլ, և մի ամբողջ սայլ անպէտք փալասներ հաւաքելուց յետոյ—հայդա զէպի թղթի գործարանը:

—Փառաւոր ընկերութիւն ես ունեցել,—ասաց զգուանքով ջրի շիշը:—Այդ մի սայլ կեղտոտ բաները լուանալու համար՝ երկու սայլ սապոնն էլ հերիք չէր լինի:

—Ի հարկէ՝ ձեր ձեռքի սապոնով չէր կարելի մաքրել ճարպոտ փալասները,—ասաց պատտաւոր:

Մեզ, բարեկամ, երեք անգամ լաւ խաշեցին և երեք անգամ էլ մոխրաջրով լուացին. յետոյ այնքան զգեցին, որ բոլորովին քրքրուեցինք և ապուրի պէս մի բան դարձանք: Բայց փառաւոր լուացուեցինք: Յետոյ մի ուրիշ աւագանում մաքուր ջրով մեզ ցայեցին, և մենք բոլորովին մաքրուեցինք: Դուրս եկաւ մաքուր ու փառաւոր ապուր, թէկուզ զգալն ան ու խաշտիր: Բայց մարդիկ դրանով էլ չբաւականացան. նրանք մեզ վրայ հոտաւէտ բան ցանեցին, որ մեր հին հոտից իսկի չմնայ:

—Երևի օ-դը-կօլօն,—ասաց ջրի շիշը:

—Ի՛նչ ես ասում: Քլօրաջո՛ւր ցանեցին, բարեկամ, քլօրաջուր: Թիշտ է, նա անուշ հոտ չունի, և նրա հոտից կփուշտաս ու կհագաս, բայց ձիւնի նման մաքրում ու սպիտակացնում է:

—Յետոյ ինչ եղաւ:

—Յետոյ՝ դարտակ բան. մենք զբօսանքներ կատարեցինք: Լաւ լուացուելուց ու սպիտակուելուց յետոյ՝ ծորակից ապուրի պէս դուրս հոսեցինք երկաթէ ցանցի վրայ: Իսկ ցանցը, որ երկաթէ անիւների վրայ էր, անդադար առաջ էր շարժւում և ցնցւում: Ապուրի ջուրը քամւում է ցանցի միջով, իսկ տեղը մնում է թղթէ թանձր զանգուածը: Յետոյ այդ զանգուածը անցնում է երկու գլանների միջով և այնտեղից դուրս է գալիս իսկական թուղթ: Միայն մի քիչ դեռ թաց է: Նա էլի առաջ է գնում, հիմա փափուկ թաղիքի վրայով: Էլի դէ-

մը կանգնած են երկու գլան, որոնք առաջինների պէս սառը չեն, այլ տաքացրած: Թուղթը կրկին անցնում է նրանց միջով և դուրս է գալիս բոլորովին չորացած: Այդ բոլորը կատարում է արագ. մի քիչ առաջ մենք հեղուկ ապուր էինք, բայց տես, շուտով թուղթ դարձանք:

—Բայց դուք, պատասուներդ, հասարակ թուղթ չէք,—ասաց ջրի շիշը.—բոլորդ էլ նախշուն էք և գանազան ծաղիկներ ունիք:

—Մեզ պատառի գործարանումն են նախշել, —պատասխանեց պատառը: Առաջ վրձինով մոխրագոյն հիմնաներկ քսեցին, յետոյ վերցրին փայտէ կաղապարները, որոնց վրայ փորուած էին գանազան ծաղիկներ, թաթախեցին վարդագոյն ներկի մէջ, սեղմեցին մեզ վրայ, և ծաղիկներ դուրս եկան: Վերցրին ուրիշ կաղապարներ, որոնց վրայ փորուած էին տերեւներ. թաթախեցին կանանչ ներկի մէջ, էլի սեղմեցին մեզ վրայ, և տերեւներ դուրս եկան: Այդպէս դուրս եկան թէև պարզ, բայց սիրուն նախշեր: Ոչ ոքի աչքը չենք ծակում, բայց սենեակին չէնք ու շնորհք ենք տալիս: Օգուտ ենք բերում և այդ պատճառով շատ ուրախ ենք, ձայն ծպտուն չենք հանում:

—Կէս ժամ կլինի, որ լսում ենք, թէ ինչպէս դուք ձայն ծպտուն չէք հանում,—գրքի դարակից մի հեզնական ձայն լսուեց, և Լևոնը իսկոյն հասկացաւ, որ խօսողը իւր սիրելի գիրքն է, որի մէջ

այնպէս լաւ-լաւ, ուրախալի ու տխրալի պատմութիւններ կան.—Մենք բոլոր գրքերս, նոյնպէս թրդ-թից ենք ու ձեզ նման նախշեր ունինք, բայց ինչպիսի նախշեր:

—Ի՞նչպէս չէ, շատ լաւ նախշեր են,—ասաց պատառը.—միայն սև-սև խազեր են. տառեր են ասում թէ ինչ...

—Իսկ այդ տառերից գիտես թէ ինչեր են դուրս գալիս: Խօսքեր: Իսկ խօսքերից: Ամբողջ պատմութիւններ.—եթէ լսես՝ ականջներդ կկախես: Մենք էլ երկրորդ կեանքն է, որ վարում ենք: Առաջին կեանքում մենք շորեր էինք. մարդկանց մարմին էինք պէտք գալիս,—տաքացնում էինք, պահպանում էինք. իսկ հիմիկուայ մեր կեանքը մարդկանց հոգու համար է. համ խելքն ենք ժաժ տալիս, համ սրտերն ենք ուրախացնում:

—Ո՞րտեղ և ո՞վ տպագրեց ձեզ:

—Ո՞րտեղ. — տպարանում: —Ո՞վ. — գրաչարները: Վերցրին անագէ տպագրական տառերը, նրանցից բառեր կազմեցին, վերեւից մուր քսեցին և տպեցին թղթի վրայ:


—Իսկ պատմութիւնները ո՞վ է հնարում. դարձեալ գրաչարները:

—Ո՛չ, դա նրանց խելքի բանը չէ: Դրա համար առանձին մարդիկ կան—գրողներ: Գրողը բոլորը տեսնում ու լսում է, իսկ յետոյ նստում ու գրում է: Հէնց ձեզ էլ, պարոններ, ձեզ բոլորիդ էլ նա

կնկարագրէ, իսկ գրաշարները կտպագրեն այդ նկարագրութիւնը: Ջգոյշ կացէք, յիմար բաներ չխօսէք:

—Այ քեզ բան. յիմար բաներ էլ չասենք,— բղաւեցին չորս կողմից:—Կարծես մենք ոչ մի նշանակութիւն չունինք. կարծես մենք քիչ դարդ ու ցաւ ենք տեսել: Ինչի, ինչի համար պիտի լռենք...

Եւ սենեակի մէջ այնպիսի աղմուկ և շփոթ բարձրացաւ, որ մնում էր ականջները փակել ու փախչել:




Զ

Միւննոյն ժամանակ սկսեց լուսանալ, և վարագոյրի յետեից պսպղաց արևի առաջին ճառագայթը: Պատուհանի վերեւից կախուած վանդակում էր Լևոնի դեղձանիկը: Նա յանկարծ թպրտաց և սկսեց երգել այնպէս ուրախ և այնպէս քաղցր, որ սենեակի աղմուկը իսկոյն դադարեց:

Ի՞նչ էր երգում դեղձանիկը:—Ահա թէ ինչ:

—Աղմուկ մի հանէք, մի նեղանաք: Եղածը անցել է: Անցածը մոռացուած է: Արևը ծագեց, տաքացրեց մարմինն ու հոգին. գուարճացէք, ուրախացէք, համարձակ գործ սկսեցէք: Եթէ մինչև վերջը այդպէս կարելի լինի ապրել՝ Աստու փառքն է:

Վարագոյրի յետևում քնած էր Լևոնի դայեակը:



Դեղձանիկի երգը նրան արթնացրեց, և նա ներս նայեց Լևոնի ննջարանը:

—Է՛, սիրելիս, մեր երգչուհին քեզ էլ արթնացրեց:

—Ա՛հ, նանիկ, միթէ չես հասկանում, թէ ինչ է երգում նա,—բացագանչեց երեխան:

—Ի՞նչ պիտի երգէ: Յայտնի բան է, Աստուած կոկորդ է տուել, և նա բղաւում է, էլի: Բայց, աղաւնեակս, ինչո՞ւ քո աչքերը այդպէս վառուել են: Երազ չես տեսել հօ:

—Եւ ի՞նչպիսի երազ եմ տեսել, նանիկ. բայց սովորէ, գուցէ երազ էլ չէր... Ամբողջ սենեակը խօսում էր:

—Ի՞նչպէս թէ սենեակը խօսում էր. չեմ հասկանում:

—Լսի՛ր, ահա կպատմեմ:

Եւ Լևոնը սկսեց պատմել: Դայեակը լսում էր ու շարժում գլուխը...

Դուք էլ, իմ պստիկ բարեկամներ, կարծեմ շարժում էք գլուխներդ: Այ՛նք հաւատում, որ սենեակը կարող է խօսել:

Բացէք ձեր աչքերը, սրեցէք ականջներդ, նայեցէք ձեր շուրջը և ուշադրութեամբ լսեցէք. ո՛չ միայն սենեակը—ձեր շուրջը պարզ կխօսի ամբողջ աշխարհը:



868

9705000

2013

Գրադարանի Գրքերի Բաժին



NL0005016

